ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

31 ՄԱՅԻՍԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Ծովինար Ալեքսանյանը, Լուսինե Աղախանյանը, Անի Առաքելյանը, Արմեն Խաչատրյանը, Կարո Կարապետյանը, Հովհաննես Հարությունյանը, Վահե Հարությունյանը, Կարեն Ղազարյանը, Սամվել Մալխասյանը, Մկրտիչ Մարտիրոսյանը, Սիմոն Պետրոսյանը, Ավագ Վարդանյանը, Սամվել Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Արմեն Բաղդասարյան, Մուշեղ Հակոբյան, Կարեն Մելքոնյան, Շուշան Խանոյան, Արթուր Մուսիկյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ասլան Ավետիսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արթուր Մուսիկյանը

Լսեցին
ԼԱՌՋ ԷՆԵՐԳՈ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԼԱՆՋԱՌ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2024 թվականի մայիսի 14-ին Արարատ համայնքի Լանջառ բնակայավրում «ԼԱՌՋ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը, Արարատ համայնքի ավագանին որոշում է.

Տալ նախնական համաձայնություն «ԼԱՌՋ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից, Արարատ համայնքի Լանջառ բնակավայրի վարչական տարածքում, Զորավար Անդրանիկի փողոց 1/1 հասցեում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին
ԼԱՆՋ ԷՆԵՐԳՈ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԼԱՆՋԱՌ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2024 թվականի մայիսի 14-ին Արարատ համայնքի Լանջառ բնակայավրում «ԼԱՆՋ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը, Արարատ համայնքի ավագանին որոշում է.

Տալ նախնական համաձայնություն «ԼԱՆՋ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից,Արարատ համայնքի Լանջառ բնակավայրի վարչական տարածքում, Գ.Նժդեհի փողոց 2-րդ նրբանցք 5 հողամասում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման աշխատանքներին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.88785 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՐԱՉ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 9-րդ, 15-րդ և 16-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 22.05.2024թ. թիվ 2/փ-192 դրական եզրակացությունը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքի Արարատ քաղաքային բնակավայրի վարչական տարածքում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող, 03-002-0061-0104 կադաստրային ծածկագիրը կրող 0.88785 հա գյուղատնտեսական նշանակության

արոտավայրի նպատակային նշանակությունը
փոխադրել՝ էներգետիկայի,կապի,տրանսպորտի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի՝ Արարատ համայնքի կարիքների համար կեղտաջրերի մաքրման կայան կառուցելու նպատակով:
2.Վերոնշյալ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխված են համարվում հողամասերի նկատմամբ փոփոխված նպատակային և գործառնական նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալու պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, ինչպես նաև ավագանու կանոնակարգով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել օրակարգը հետևյալ քննարկվող հարցերով.
1.Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 31-ի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.«ԼԱՆՋ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից Լանջառ բնակավայրում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
3.«ԼԱՌՋ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից Լանջառ բնակավայրում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
4.Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,88785հա արոտավայրի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Ավագանու անդամներ

ԿԱՐԵՆ ԱԴԱՄՅԱՆ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՖԻՐԴՈՒՍ ԶԱՔԱՐՅԱՆ

ԼԱՐԻՍԱ ԹՈՒՆՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ԱՍՊՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌԻՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ՍԵՐԳՈ ՄԻՆԱՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ՍԻՆԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արթուր Մուսիկյանը

_____